ԱՎՏՈԲՈՒՍԵՐ

ՀԱՊՀ ԳՄ «Սպորտային ծրագրավորման» դպրոցի սաները պատրաստվում էին հերթական մրցույթին: Մրցույթին մասնակցելու իրավունք էին ստացել n աշակերտ և m ուսանող, որոնք մրցույթի անցկացման վայր պետք է հասնեն ավտոբուսներով: Յուրաքանչյուր ավտոբուս կարող է տեղափոխել դպրոցի k սանի, ընդ-որում բոլոր ավտոբուսներում պետք է նստած լինեն ոչ պակաս քան երկու ուսանող:

Ձեր խնդիրն է գրել ծրագիր, որը կարտածի այն նվազագույն ավտոբուսների քանակը, որն անհրաժեշտ է մասնաճյուղի սաներին մրցույթի վայր հասնելու համար: Եթե իրավունք ստացած մասնակիցներին հնարավոր չէ տեղափոխել, ապա արտածել 0:

Մուտքային տվյալներ.

Մուտքի միակ տողում տրված են n, m և k բնական թվերը, որոնք չեն գերազանցում 10000-ը:

Ելքային տվյալներ.

Ելքում պետք է արտածել խնդրի պատասխանը:

Օրինակներ.

N	stdin	stdout
1	10 4 7	2
2	10 4 5	0